ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«20» «հունիս» 2024թ. **ՈՄՈ/165-Ա**

ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և «Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի 8-րդ հոդվածով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N2323-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի սոցիալապես անապահով քաղաքացիների կողմից ներկայացված դիմումները և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2021 թվականի փետրվարի 23-ի ՄՈ/60-2021 որոշմամբ ստեղծված հանձնաժողովի եզրակացությունը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված ծախսերից սոցիալական աջակցության նպատակով հատկացնել 100000 (մեկ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ գումար, որպես քաղաքացիներին միանվագ դրամական օգնություն՝ համաձայն հավելվածի:
2. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի աշխատակազմի գլխավոր ֆինանսիստ Ա.Հովհաննիսյանին՝ տասնօրյա ժամկետում կատարել գումարի վճարում:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

2024-06-20 17:34:54 GMT+4
Հավաստված է Ա.Հովհաննիսյանի կողմից

ՄԱՐԶՊԵՏ՝ **Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի
2024 թվականի հունիսի 20- ի
N ՄՈ/265-Ա որոշման

Դրամական օգնություն ստացողների ցուցակ

Հ/Հ	Անուն Ազգանուն	Բնակավայր	Գումարը	Ծանոթություն
1	Սերոբ Սաֆարյան	ք. Էջմիածին, Չարենց փողոց, 19 շենք, բնակարան 44	50000/ հիսուն հազար/ դրամ	
2	Մելինե Դավթյան	Ք. Մեծամոր,1 թաղամաս, 15 շենք, բնակարան 40	50000/ հիսուն հազար/ դրամ	

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Недействительная подпись

VERIFIED QCSP 20.06.2024 15:56:55 GMT+4

Подписано: HOVHANNISYAN ARAM 3812640023